Հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման

տարեկան հաշվետվություն

2022-2023 ուստարի

Մեթոդմիավորման նախագահ՝ Ա. Հովսեփյան

2022-2023 ուստարում մասնախումբն աշխատել է հետևյալ կազմով և ծանրաբեռնվածությամբ հետևյալ դասարաններում.

1. Հովսեփյան Արմենուհի - 6-րդ <<ա>> (մայրենի) , 7-րդ <<բ>> (հայոց լեզու, գրականություն), 12-րդ <<ա>>, 12-րդ <<բ >> (հայոց լեզու, հայ գրականություն)- 23 ժամ, (2-րդ կիսամյակում՝ 25)

2. Ասատրյան Արևիկ – 11-րդ , 8-րդ <<բ>>, 6-րդ <<բ>>, 5-րդ <<ա>> - 24 ժամ

3. Գաբրիելյան Անուշ – 10-րդ (հումանիտար և բնագիտական հոսքեր) , 7-րդ <<ա>>,

9-րդ (հայոց լեզու, 1-ին խումբ) – 21 ժամ

4. Խոջոյան Լուսինե – 9-րդ (հայոց լեզու, 2-րդ խումբ , գրականություն), 8-րդ <<ա>>,

5-րդ <<բ>> - 18 ժամ

Մասնախմբի բոլոր անդամներն աշխատել են ըստ ուսպլանի և դասագրքերի կազմած, առարկայական չափորոշիչներին համապատասխան թեմատիկ պլաններով, փորձարկվող դասարաններում՝ ըստ հանրակրթական նոր չափորոշիչների ԿԶՆԱԿ կողմից կազմված թեմատիկ պլաններով, որոնք համապատասխանեցվել են մեր ունեցած դասաժամերին, քննարկվել մասնախմբի նիստերում, հաստատվել տնօրենի կողմից և մուտքագրվել էլեկտրոնային մատյան: Հաստատվել է նաև մասնախմբի նախագահի տարեկան աշխատանքային ծրագիրը,

որում ներառված են ուստարվա ընթացքում մասնախմբի գործունեության շրջանակներում նախատեսված աշխատանքները:

Ելնելով ծրագրերի կատարողականությունից, դասարանների առանձնահատկություններից և պարապող ուսուցիչների առաջարկություններից՝ դպրոցական բաղադրիչից 1-ական ժամեր են հատկացվել 5-6-րդ դասարանների <<մայրենի>>, 7, 9-րդ դասարանների <<հայոց լեզու>>, 11-րդ դասարանի <<հայ գրականություն>>, 2-ական ժամ՝ 10-րդ դասարանի հումանիտար հոսքի <<հայոց լեզու>> և <<հայ գրականություն>> առարկաներին, 2-րդ կիսամյակում 1-ական ժամ՝ նաև 12-րդ <<ա>> և 12-րդ <<բ>> դասարանների <<հայոց լեզու>> առարկային:

ՈՒստարվա սկզբում որոշվել է մասնախմբի 2021 թվի սեպտեմբերի 16-ի նիստում հաստատված մեկ կիսամյակի ընթացքում տրվելիք թեմատիկ և գործնական աշխատանքների, բանավոր հարցումների քանակը պահպանել նույնը, այն է՝ շաբաթական ժամերի քանակով թեմատիկ և մեկ գործնական աշխատանք, անհրաժեշտության դեպքում, հատկապես բազմաքանակ գրավոր աշխատանքները պակասեցնել մեկով (ԿԶՆԱԿ թույլտվությամբ), բանավոր հարցման քանակը՝ առնվազն շաբաթական ժամերի կրկնակին:

Ընթացիկ ուստարում մեր աշակերտները չեն մասնակցել <<Մեղու. հայերենը բոլորի համար>> ամենամյա մրցույթին, քանի որ այն անցկացվում է առցանց, գրանցումը իրականացնում են ծնողները, և անգամ արդեն գրանցված աշակերտները կապի և այլ պատճառներով չեն կարողանում միանալ, որն առաջացնում է դժգոհություն ծնողների և աշակերտների շրջանում:

Պարբերաբար ստուգվել է ծրագրերի կատարողականությունը, գրավոր աշխատանքների քանակի և տեսակների ապահովումը: Կատարել ենք փոխադարձ դասալսումներ դասի վերջնարդյունքների ապահովման, դասերի պլանավորման

արդյունավետությունը գնահատելու, թեմայի յուրացման աստիճանը ստուգելու, մեթոդական օգնության նպատակով հատկապես փորձարկվող դասարաններում:

Պատշաճ ձևով կազմակերպվել է առարկայական օլիմպիադաների առաջին՝ դպրոցական փուլը, որին մասնակցել է 8-12-րդ դասարանների 28 աշակերտ հայոց լեզվից, 10 և 12-րդ դասարանների 6 աշակերտ՝ հայ գրականությունից: Երկրորդ՝ տարածաշրջանային փուլին մեր դպրոցից մասնակցած աշակերտներից մրցանակային տեղ է զբաղեցրել միայն 12-րդ դասարանի աշակերտուհի Լիլիա Աբովյանը հայոց լեզվից, որը 1-ին տեղ է գրավել մարզային փուլում, սակայն, ցավոք, հանրապետական փուլում հավաքել է ցածր միավորներ:

ՈՒստարվա ընթացքում կազմակերպվել և անց են կացվել առարկայական միջոցառումներ՝ բաց դասեր, պատի թերթերի լույսընծայում, 8-րդ և 10-րդ դասարաններում գրականությունից իրականացվել են նախագծային աշխատանքներ (ուսուցիչներ՝ Լ. Խոջոյան, Ա. Գաբրիելյան): Մեթոդմիավորման նախագահի նախաձեռնությամբ կազմակերպվել են նաև գրական-երաժշտական ցերեկույթներ՝ նվիրված Գիրք նվիրելու, Մայրենի լեզվի օրերին, Հովհ. Թումանյանի մահվան 100-ամյա տարելիցին, հիմնականում 5-7-րդ դասարանցիների մասնակցությամբ: Դպրոցի հատկապես 10-12-րդ դասարանցիները ընդգրկվել են համայնքային բոլոր գրական-գեղարվեստական միջոցառումներին՝ նվիրված Անկախության օրվան, 2020 թ. 44-օրյա պատերազմում զոհված մեր նախկին աշակերտների հիշատակին, ՈՒսուցչի օրվան, հայոց բանակին, Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչմանը, մայիսյան տոներին :

5 -12-րդ դասարանների բոլոր աշակերտները ուստարին ավարտել են տարեկան դրական գնահատականներով (փորձարկվող դասարաններում 1-3 գնահատականները նույնպես համարվում են դրական): 16.05.2023 թ. պատշաճ մակարդակով անց է կացվել լրացուցիչ քննություն, որին մասնակցել է 120-200 ժամ բացակայություն ունեցող չորս աշակերտ. բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: 9-րդ դասարանի ավարտական քննությունից անբավարար է

ստացել երեք աշակերտ՝ Շահումյան Արեն, Ռևազյան Սերգեյ, Սևինյան Էրիկ, որոնք սահմանված կարգով դպրոցում կհանձնեն վերաքննություն հուլիսի 2-ից 8-ն ընկած ժամանակահատվածում կամ օգոստոսի 20-ից հետո:

12-րդ դասարանի 25 աշակերտ 07.06.23 թ. մասնակցել է հայոց լեզվի և գրականության պետական ավարտական քննությանը և ստացել բավարար գնահատականներ, ցավոք, նույն օրը Գերազանցության մեդալի հավակնորդ Լիլիա Աբովյանը չի պահպանել մեդալ ստանալու իրավունքը: Սոնա Զուրաբյանը բավարարվել է հունվարին հանձնած քննության արդյունքով, չորս աշակերտ 20. 07.23 թ. մասնակցել է միասնական կենտրոնացված քննություններին, ստացել բավարար գնահատականներ:

Գումարվել է մեթոդմիավորման 11 նիստ, գրվել 11 արձանագրություն:

26. 06. 2023 թ.

Digitally signed by NASIBYAN ASTGHIK 6910670051
Date: 2023.07.04 10:44:27 AMT